

ՓԱՅԼԱԿ ԱՆԹԱՊՅԱՆ

ԳԼԱՁՈՐԸ ՀԱՅ ԳԻՏԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿՅԱՆՔՈՒՄ

(Գլաձորի համալսարանի հիմնադրման 700-ամյակի առթիվ)

Հայ ժողովուրդը գիտությանը, գրականությանը, արվեստին և առհասարակ մշակույթին հետամուտ է եղել վաղագույն ժամանակներից: Դա հայտնի իրողություն է: Նա ըստ այդմ դարեր շարունակ վայելել ու վայելում է օրինական հարգանք և պատիվ ամբողջ աշխարհում: Նրա ստեղծագործ հանճարի բազմապան ու բազմաժանր արգասիքները, որոնք մեզ են ավանդվել իբրև թանկարժեք ժառանգություն, հիացմունք ու երախտագիտություն են ներշնչել: Այդ հանճարի ճշմարտապես հանճարեղ մշակները՝ Պարույր Հայկակը, Լևոն Թվաբանը, Մեսրոպ Մաշտոցը, Դավիթ Անհաղթը, Անանիա Շիրակացին, Գրիգոր Նարեկացին... այսօր էլ մեզ պարտավորեցնում են հիշել իրենց անունները ակնածանքով և շնորհապարտությամբ: Իսկ որքան «գանձ անապական» և «համօրէն երախտիք» են արարվել դրպրության օջախներում՝ միջին դարերի հայ դպրոցներում ու համալսարաններում, որոնցից մեկն է Գլաձորը՝ այնքան պայծառ ու նշանակալից:

Գլաձորը հայ միջնադարում բարձրանում է ոչ երբեք իբրև անապատային շքեղություն՝ ամայության մեջ, հանկարծուստ: Այն իր փառքի շռայլությամբ ողողում է իր նախորդ և հետնորդ հոգեհարապատների բարի անունն ու համբավը: Եթե շատ հիները թողնենք իրենց վաստակաբեկ խաղաղության մեջ և հիշենք միայն մի քանիսը՝ Անիի, Հաղբատ-Սանահինի, Խորանաշատի, Խոր վիրապի բարձրագույն տիպի դպրոցները, մեկ համար լրիվ օրինաչափ և օրինական կդառնա Գլաձորի ծնունդը այդ օրերին և այդ միջավայրում:

Գիտամշակութային ու կրթական հարուստ ժառանգություն և կենարար ավանդներ էին չիոխանցվել Գլաձորին: Դրանք միանգամայն բավարար էին նախնական, տարերային որոնումներ չկատարելու և եղածը իբրև հիմք ու երաշխիք ընդունելու համար: Այնուհետև ի՞նչ էր պետք նրան դառնալու համար իր ժամանակի ամենաառաջատար բարձրագույն դպրոց-համալսարանը: Ժամանակակիցների կարծիքով՝ միայն «չորս իրս»[1]: «Չորս իրս հարկաւոր է ի պէտս ուսման... պարտ է, զի կամք վարդապետին լինի ուսուցանող, և այլն՝ առանց ագահութեան կամ փառասիրութեան. երկրորդ՝ ջերմ սէր ու (սա) նողացն, երրորդ՝ ժամանակ խաղաղութեան, չորրորդ՝ տեղիքն անապատ և անդորր»[1]: Այս չորսն էլ, ինչպես ցույց են տվել ուսումնասիրությունները, առկա էին միաժամանակ և միատեղ: Առաջին երկուսը՝ հանձինս նրա երջանկահիշատակ հիմնադրի՝ Ներսես Մշեցու և «պանծապայծառ» ուսուցչապետի՝ Եսայի Նչեցու, ապահովված էին նույնիսկ ավելիով: Չորրորդը՝ իդեալական էր. լեռների «երկնառաք» պարիսպներով պաշտպանված բնական անվրդով խա-

[1] **Լ. Խաչիկյան,** Գլաձորյան համալսարանը և նրա սաների ավարտական ատենախոսությունները. «Երևանի պետ. համալսարանի գիտական աշխատություններ», 1946, XVIII, էջ 429:

դաղություն: Մնում էր երրորդը, իհարկե ամենաէականն ու ամենադժվարինը՝ քաղաքական, տնտեսական ապահովությունը: Սմբատ Օրբելյանը Մանգու խանից «ինջուի» իրավունք էր ձեռք բերել: Դա նշանակում էր, որ իր տիրույթներում գանձվելիք հարկերը հավաքելու էր ինքը և ինքն էլ ուղղակիորեն առաքելու էր Մանգու խանի գանձարանը, և, որ առավել կարևոր էր, դրանով իր տիրույթները և բնակչությունը ապատվում էին մոնղոլ հարկահավաքների բազմակի ու բազմաշերտ հարկային հարբուստահարություններից, իրավական ու վարչական կամայականություններից: Տեղի իշխանական տները տնտեսական ու քաղաքական այս ձեռնտու պայմաններում բարելավում էին իրենց կեցությունը, կարողանում էին ավելի լավ հոգալ նաև իրենց տիրույթներում և ենթակայության տակ եղած վանական ու կրթական հաստատությունների նյութատնտեսական ապահովության մասին: Շրջակա բնակչությունը, որը մեծ աջակցություն էր ցույց տալիս այս առումով, համեմատական բարեկեցության պայմաններում ավելի շատ բաժին էր հանում հիշյալ բնույթի հաստատություններին:

Բացի այս բոլորից՝ եկեղեցին ու եկեղեցականությունը, որոնք իշխում էին հողային բավականաչափ լայն տարածությունների վրա, հարկերից ազատվել էին: Ուրեմն, հակառակ ընդհանրապես երկրում տիրող մոնղոլական կենսամաշ դաժանություններին, Օրբելյանների և նրանց հովանավորությունը վայելող Պռոշյանների տիրույթները, ուր հիմնադրվել էր Գլաձորի համալսարանը, ապահով էին նաև երրորդ «իրով»՝ տնտեսական ու քաղաքական ձեռնտվությամբ:

Գլաձորի բարգավաճման համար կային նաև լրացուցիչ գործոններ, այդ թվում՝ ազգային-եկեղեցական բարենպաստ մթնոլորտ, աշխարհիկ և հոգևոր իշխանությունների իրատես փոխըմբռնում: Ամենամոտիկ անցյալում այն դրսևորվել էր Խոր վիրապի պարագային, վերջնիս «տիեզերալույս» ուսուցչապետի՝ Վարդան Արևելցու և իշխաններ Սադունի, Քրդի, Սմբատի ու Պռոշի միջև ստեղծված բարեկամությամբ: Շատ հավանական է, որ այս բարեկամության ընթացքում էլ հղացվել էր Գլաձորի հիմնադրման գաղափարը: Դրան, անկասկած, տեղյակ էր Վարդան Արևելցու ժառանգորդ-սանը՝ Ներսես Մշեցին: Ըստ այդմ էլ՝ երբ իր ուսուցիչը մահանում է, նա հայրենի երկրի՝ Մշո Առաքելոց և Թարգմանչաց վանքերում միաժամանակ դասավանդելուց հետո, քրդական ցեղերից հալածվելով, գալիս է Վայոց ձոր և հիմնադրում Գլաձորը 1282 թվականին:

Կար նաև հետևյալը. Սյունիքը հայ կրթական-լուսավորական կյանքում որոշակի դեր է կատարել մաշտոցյան օրերից: Անցյալում հռչակ է վայելել նրա վարդապետարանը: Այս միջավայրում էին իրենց գիտամշակութային ու կրթական պայծառ ջահերը վառել Խորանաշատի, Այրիվանից, մանավանդ Խոր վիրապի բարձրագույն դպրոցները: Բավականին հարուստ էր այս կողմերում կուտակված ձեռագրական ժառանգությունը, որը հուսալի երաշխիք էր հետագա գիտական ու կրթական արգասաբեր աշխատանքներ ծավալելու համար:

Ահա այս դրական նախադրյալներն էին, որ պայմանավորեցին Գլաձորի հիմնադրումն ու հետագա արդյունաշատ գործունեությունը:

Գլաձորի «հոգևոր» հիմնադիրը Ներսես Մշեցին էր, «պայծառացնողը»՝ Եսայի Նչեցին: Պետք է, սակայն, հարգանքի ծանրակշիռ մի բաժին էլ հատկացնել աշխարհական հիմնադիրներին, հատկապես Պռոշյան տան ներկայացուցիչներին, որոնք, վինակցելով մոնղոլներին ու վարելով ճկուն, իրատես քաղաքականություն, Օրբելյանների նման և նրանց հովանավորության տակ տնտեսական ու քաղաքական բարենպաստ պայմանների մեջ լինելով, Գլաձորի տնտեսական հոգսերի առավել մեծ բաժինը իրենք էին ստանձնել: Դա, թերևս, հիմքերի հիմքն էր Գլաձորի բարեհաջող զարգացման համար: Բարձրագույն դպրոց-համալսարանները անըմբռնելի են առանց աշխարհիկ իշխանական-պետական հովանավորության: Այդպես է եղել մեզ մոտ, ինչպես նաև Բյուզանդիայում, Եվրոպայում և այլուր:

Ծրագիրը, որով առաջնորդվել և կրթական, գիտամշակութային ու մատենագրական գործունեություն է ծավալել Գլաձորը, ըստ էության նախորդ մեր բարձրագույն բնույթի գլխավոր դպրոցների՝ Անիի, Հաղբատ-Սանահինի, Խորանաշատի, Խոր վիրապի ուսումնական ծրագրերի նմանակն է եղել՝ թարմացված իր ժամանակի գիտական նորահայտ տեղիքներով: Այն հայտնի է մասնագետներին: Ասենք միայն, որ այդ ծրագիրը բաղկացած էր, բնականաբար, ամենից առաջ կրոնագիտական, եկեղեցապատմական, աստվածաբանական, վարդապետական-դավանաբանական ու ծիսագիտական առարկաներից, Ս. Գրոց և եկեղեցական հայրերի գրվածքների ընթերցումից ու մեկնաբանությունից: Ապա՝ «եռյակ» (Trivium) և «քառյակ» (quatrivium) բաժանման ենթարկված յոթ հիմնական «արվեստներից»: «Եռյակում» ընդգրկված էին քերականություն, ճարտասանություն, տրամաբանություն, իսկ «քառյակում»՝ թվաբանություն, ե-

ռաժշտություն, երկրաչափություն և աստղաբաշխություն: Բայց այս այն ամենը չէ, ինչ ուսուցվել է բարձրագույն դպրոցներում և Գլաձորում: Այստեղ դասավանդվող հիմնական առարկաներից են նաև գրականության պատմությունն ու տեսությունը, «գրոց պատճառները», բանահյուսությունը, առասպելավարժությունը, պատմագիտական նյութերը՝ Աստվածաշնչի, անտիկ աշխարհի տարբեր ժողովուրդների, հարևան երկրների, վերջապես, հարավատ ժողովրդի պատմական անցյալի մասին: Հարուստ են սույնը հաստատող մատենագրական փաստերը: Ճշգրիտ գիտությունների գծով, վերոհիշյալներից բացի, դասավանդվել են քիմիա, բուսաբանություն, կենսաբանություն, բժշկագիտություն: Չմոռանանք հիշել, որ Հայաստանում (գոնե ԺԳ դարում, եթե ոչ ավելի շուտ) դիահերձումներ են կատարել ուսուցման նպատակով[2]:

Անտարակույս, դասավանդվող կարևոր առարկաներից էին գրչության արվեստն ու ծաղկարարությունը: Ըստ երևույթին, ուսուցվել են նաև ձեռագրերի արարման այլևայլ աշխատանքների հետ կապված մասնագիտություններ:

Գլաձորի համալսարանի հիմնադրման և ողջ գործունեության բուն նպատակը Հայ Եկեղեցին ջեն ու բարգավաճ պահելն էր: Դրա համար ամենաառաջնայինը համապատասխան սպասավոր-գործիչների պատրաստումն էր: Նախ և առաջ անհրաժեշտ էր նրանց կրոնագիտական, աստվածաբանական, վարդապետական, ծիսագիտական ծանոթությունները խորացնել, կամային և բարոյական կարողությունները զարգացնել ու ամրապնդացնել, որպեսզի կրոնի և Եկեղեցու վարդապետության ու դավանանքի նկատմամբ լինեին զգաստ, նախանձախնդիր և անկիջում: Պետք էր ստեղծել մատենագրական ջատագովական հուսալի ժառանգություն կրոնի և Եկեղեցու մասին՝ դրանք անվնաս ու անաղարտ պահելու համար:

Հայ Եկեղեցու դերը հայրենի գիտության, արվեստի ու մշակույթի ձևավորման ու զարգացման գործընթացում միանգամայն նշանակալից է: Դա քաջ հայտնի էր նաև Գլաձորի երախտավոր գործիչներին: Այդ իսկ պատճառով նրանք նպատակալաց աշխատանք են տանում նաև այդ ուղղությամբ՝ վերանորոգելով ու ճոխացնելով հիշյալ երեք բնագավառներն էլ պանծալի ներդրումներով:

Այս ելակետով էլ այստեղ ևս նպատակամետ ու համառ ջանքեր են գործադրվում՝ ստեղծելու բոլոր այն դեմքերն ու միջոցները, որոնք կկարողանային հայ ժողովրդի ազգային-հասարակական գիտակցությունն ու կյանքը կազմակերպել, Եկեղեցու և ժողովրդի անկախությունը պաշտպանել, մանավանդ թույլ չտալ օտարասեռ գաղափարական, վարդապետական և դավանանքային որևէ վնասակար ներհոսք դեպի ազգային-եկեղեցական կյանք: Հատկապես այդ օրերին վերջինս ամենամտահոգիչ խնդիրներից էր: Աշխարհիկ իշխանությունները աջակցում էին իրենց նյութական և վարչական աջակցությունը, որպեսզի ամեն կերպ զորավիգ կանգնեն Գլաձորի այդ ջանքերին, որոնք հասարակական-հայրենասիրական այնքան մեծ կարևորություն ու արժեք էին ստանում:

Գլաձորի համալսարանի թողած գիտական-ստեղծագործական ժառանգությունը, սկսած նրա սաների ավարտական ատենաբանություններից, վկայում է այնտեղ ուսուցանող և ուսած մարդկանց գիտական լայն հետաքրքրությունների, բանիմացության, ստեղծագործական կարողությունների, մտածողության, ճաշակի, լեզվական մշակույթի բարձր մակարդակի, ինչպես նաև ժամանակի հոգևոր-եկեղեցական ու ազգային-հասարակական կյանքի նկատմամբ հետաքրքրասիրության և հոգատարության մասին: Նրանց գրավում էին նաև եվրոպական կրոնական և ոչ կրոնական գիտական նվաճումները, որոնք, թեկուզ և երբեմն աղարտված վիճակում, մեծ մասամբ ունիթոռների միջոցով էին տարածվում ոչ հեռավոր Մարաղայում, ապա՝ մոտիկ Քռնայում և Երնջակում: Հակառակ այս հանգամանքին, պետք չէ ժխտել այն դրական դերը, որ այս բնագավառում ունեցել են ունիթոռները:

Գիտության նկատմամբ ծարավն ու նվիրվածությունը գլաձորցիների հիմնական արժանիքներից են: Ուսումնասիրությունները շատ օգտակար և արժեքավոր պարզաբանումներ են տվել գլաձորցիների կյանքի ու գործունեության մասին: Մեր հոդվածի բնույթից ու միտումից ելնելով՝ մենք նրանց և հարակից զուտ պատմաբանասիրական խնդիրներ վանց ենք առնում: Հիշենք միայն այն երախտավորներից մի քանիսին, որոնք որոշակի դեր ու լումա ունեն համալսարանի կրթական կյանքում կամ ընդհանրապես հայ մատենագրության անդաստանում իբրև մեծ բաբունապետներ: Նրանցից են Ներսես Մշեցու և Եսայի Նչեցու անմիջական գործակիցներից Դավիթ Նորավանեցին (հետագայում Նորավանքի առաջնորդ), Տիրատուր Կիլիկեցին (ապա՝ Հերմոնի վանք), Սարգիս, Մարտիրոս բաբունիները, Հակոբ Թագորցին,

[2] **Ֆ. Անթապյան,** Միջնադարյան Հայաստանում իրագործվող դիահերձման վերաբերյալ ևս մեկ նոր վկայություն, «Սիոն», Երուսաղեմ, 1977, Գ, էջ 61—64:

Հովհան Որոտնեցին: Առավել աչքի ընկնող սաներից են եղել՝ Մխիթար Սասնեցին (ապա՝ Մեծոփա վանք), նրա դասընկերը՝ Հովհաննես Արճիշեցին (ապա՝ Քաջբերունիք), սրանց դասընկերը՝ Ստեփանոս Արճիշեցին, որը միաժամանակ Մխիթար Սասնեցու «Վարքի» հեղինակն է, Առաքել և Ավետիս Հաղբատցիները, Կիրակոս Երզնկացին, Հովհաննես Ծործորեցին, Վարդան Կիլիկեցին, Պողոս Կիլիկեցին, Թորոս Տարոնացին, Ավագը, Մոմիկը և ուրիշներ: Այս անուններից յուրաքանչյուրը ուրույն գիտական, մատենագրական, գեղարվեստական, մշակութային մի բնագավառ է ներկայացնում նշանակալից վաստակով ու համբավով:

Այս «բանից սպասավորների» պայծառամտության, հոգեկան առաքինության, հետևողական ջանասիրության և անձնվեր հայրենասիրության շնորհիվ էր իր վսեմ առաքելությունը իրագործում Գլաձորը:

Ի՞նչն էր այդ առաքելության իմաստը, կշիռը ու արժեքը...

Նախ և առաջ հիմնական նպատակի, այն է՝ Եկեղեցին բանիմաց ու բոլորանվեր գործիչներով օժտելու ծրագրի գերապանց իրագործումը: Գլաձորյան մտավորական-վարդապետների սերունդը իր երախտաշատ նախորդների թողած ժառանգության ու ավանդների և տեղում ամբողջացած լիարդյուն ուսումնառության ու դաստիարակության շնորհիվ տասնամյակներ շարունակ անթերի կերպով հոգաց ոչ միայն տեղի, այլև Հայաստանի ողջ տարածքի վրա սփռված եկեղեցիների ու վանքերի հոգևոր-կրոնական և եկեղեցավարչական պահանջները:

Գլաձորյան սաները չմնացին շարքային դերգույն միջակության մեջ: Բոլորն էլ դարձան առաջատար գործիչներ՝ գլխավորելով բազմաթիվ վանքերին առընթեր բարձրագույն դպրոցներն ու դրանց կրթական և վանական կյանքը: Նրանց կազմակերպչական և բարենորոգչական դերը միանգամայն ակնհայտ է:

Նշելի է նաև այն, որ, ուր էլ որ նրանք հաստատվեցին, ստեղծեցին եկեղեցական գործիչներ պատրաստելու շարունակական հնարավորություն՝ ըստ նմանության և օրինակի իրենց արժանավոր նախորդների: Այդպես եղավ, որ Հերմոնում, Տաթևում, Մեծոփա վանքում և մյուս կարևոր կրթական ու գիտամշակութային կենտրոններում հասուն և եռանդալից գործունեության ասպարեզ մտան ընտրյալ ու «առաքինապարդ» եկեղեցական գործիչներ:

Այս հիմնական հարցի լուծման ընթացքում, օրինաչափորեն մեծ կարևորություն ստացավ վարդապետական կոչման և աստիճանի նոր իմաստավորումը: Վարդապետական գավազանը բարձրագույն իմացության ցուցանիշն է ու վկայականը եկեղեցական կյանքում: Բոլորովին էլ անհիմն չի ստեղծված հետևյալ առակը հենց միջին դարերում, որտեղ շատ որոշակի ընդգծված է այն տեղն ու դերը, որ վերապահված էին վարդապետական գավազան կրողներին. «Ընթռնեցին զմէկ աշխարհակայն ի մեղս և բերին առ սարկաւագն, և սարկաւագն ասաց, թէ երէցն աստ է և քան զիս մեծ է և ունի իշխանութիւն, առ նա տարէք. Եւ տարին, և երէցն ասաց, թէ եպիսկոպոսն աստ է, առ նա տարէք: Եւ տարին, և եպիսկոպոսն ասաց, թէ կաթողիկոսն աստ է, առ նա տարէք: Եւ տարին, և կաթողիկոսն ասաց. Վարդապետն աստ է, առ նա· տարէք: Եւ տարին, և վարդապետն եդ կանոնս և արժանացոյց ապաշխարութեամբ...»[3]: Վարդապետ-ռաբունապետը հատկապես աստվածաբանական, վարդապետական և դավանաբանական հարցերում գերագույն հեղինակություն էր: Նրան էր վստահվում պաշտպանել եկեղեցին գաղափարական-տեսական բոլոր սայթաքումներից և օտարասեռ միջամտություններից: Նա էր տեսականորեն ղեկավարում Եկեղեցու ծիսագիտական, երբեմն նաև հոգևոր-վարչական խնդիրները, որոնք հետագայում դրվում էին եպիսկոպոսական ժողովի քննությանն ու հաստատմանը: Վարդապետների կարևորությունն ու դերը ավելի է բարձրացել, երբ Եկեղեցու ներքին կյանքը վտանգվել է ներսից, բայց մանավանդ օտար ճնշումների ու խարդավանքների պատճառով: Գլաձորյան վարդապետների պարագային այդ առավել ևս այդպես էր, որովհետև կաթոլիկ ունիթոռ քարոզիչները և նրանց հակված հայազգի գործիչները մոլեգին քարոզչություն էին ծավալում հայ բնակչության մեջ Հայ Եկեղեցու դեմ: Ուստի, շատ անհրաժեշտ էր առավելագույնս խորացնել սեփական հմտությունը և բարձրացնել հայ ժողովրդի զգոնությունն ու ոգին: Գլաձորցիները այս ամենը իրագործում էին խիստ բարեհաջող:

Գլաձորը մեծապես նպաստել է Հայ Եկեղեցու աստվածաբանական, վարդապետական, դավանաբանական, ծիսագիտական հարցերի քննությանն ու լուսաբանությանը: Այս բնույթի հարցերի առնչությամբ նույնիսկ շատ հեռավոր վայրերից դիմում էին Գլաձոր՝ լրջմիտ և ստույգ պարզաբանություններ ստանալու: Սա տեսական և գործնական միանգամայն արժեքավոր ներդրում էր Հայ Եկեղեցին ամրացնելու և նրա վարկը բարձրացնելու տեսակետից:

Նշանակալից են Գլաձորի մնայուն ծառայությունները հայրենի գիտության, փիլիսո-

[3] Լ. Խաչիկյան, նշված հոդվածը, էջ 423:

փայական, քերականագիտական, պատմագիտական մտքի, նաև ճշգրիտ գիտությունների մշակման ու զարգացման գործում: Այս ոչ միայն որոշակիորեն այստեղ արարված մատենագրական ժառանգությամբ, այլև նրանով, որ կրթական և գիտամշակութային այլ կենտրոններում դրանց հետագա առավել բարձր զարգացման համար հիմք ու գործարար նախադրյալներ էր տալիս Գլաձորը:

Այս նույնը վերաբերում է նաև Գլաձորում հաստատված և հետագա զարգացման լայն ուղի բռնած գեղագիտական տեսական ու գործնական հարցերին, գեղարվեստական մտածողության, ճաշակի, մանրանկարչության (Թորոս Տարոնացի, Ավագ), ճարտարապետության, քանդակագործության (Մոմիկ), գեղարվեստական գրականության (Ներբողներ, ճառեր, հանելուկներ) բնագավառներին:

Նշելի է վերոհիշյալ բոլոր աշխատանքներում գլաձորցիների ոչ միայն ակներև իմացությունը, այլև վերլուծելու, համադրելու, վերացարկելու, ընդհանրացնելու կարողությունը, որն այնքան էական է գիտության համար:

Գլաձորի շատ հիմնական նպաստներից է և այն, որ դարձյալ, ոչ միայն տեղում էին լավագույնս կազմակերպել ուսումնառության, լուսավորության, գիտության ծավալման աշխատանքները, այլև մեծապես սատարել, որ իրենց փորձն ու ավանդները ևս արմատավորվեն ու պտղավորվեն Հայաստանի բազմաթիվ գավառներում թե՛ անմիջաբար իրենց իսկ մասնակցությամբ, թե՛ իրենց հասցրած սերունդների ջանքերով: Այսպես նրանք իմացական և հոգևոր նորանոր լիցքեր էին հաղորդում նաև այն կրթական-վանական կենտրոններին, որոնցում շարունակվում էր դարբնվել հայ գիտական-ստեղծագործական միտքը ընդհանրապես:

Այս առնչությամբ պետք չէ անտեսել նաև այն, որ գլաձորցիները խելամիտ վերաբերմունք ցույց տվին եվրոպական գիտության (ճշգրիտ ու հասարակական) նկատմամբ, որը, ինչպես նշել ենք, իրենց հասնում էր առավելապես ունիթորական քարոզիչների միջոցով: Նրանք իրավամբ չխորշեցին վերջիններիս ակամա ծառայություններից և, անկասկած, շահեցին: Երբեմնի գլաձորյան սաների՝ հատկապես Հովհաննես և Հակոբ Քռնեցիների ջանքերով ստեղծվեց հայերեն ունիթոռական թարգմանական հարուստ գրականություն, որի կրոնագիտական, աստվածաբանական, եկեղեցապատմական, գիտական, մշակութային, լուսավորական, լեզվական (որոշ թյուրումներով հանդերձ) օգտակար դերն ու նշանակությունը հատկապես այն ժամանակների առհասարակ թանձրացած խավարի պայմաններում տարակուսելի չէ երբեք:

Մենք դժվարանում ենք հայ միջնադարյան համալսարանները լիովին նույնացնել եվրոպական իրենց անվանակիցների հետ (Պրագայի, Փարիզի), ինչպես անում են որոշ մասնագետներ Գլաձորի պարագային՝ նշելով ծրագրային որոշ համընդհանրություններ: Անհրաժեշտ է տեսնել ու քննել շատ էական այլ գործոններ ևս, որոնք բոլորովին էլ նույնական չեն: Անջրպետը պետք չէ անտեսել. այն կա, թեպետ և շատ քիչ, այնքան քիչ, որ միջնադարյան հայ համալսարաններին չի կարող զրկել իրենց իրավական դիրքից: Սա նվազ պատիվ չէ, եթե մանավանդ փորձենք այս լուրջ խնդիրը չծանրաբեռնել անօգուտ ոգևորությամբ: Սույնը մեզ հուշում է միջնադարյան համալսարանների, համաշխարհային չափանիշով, պատմության ուսումնասիրությունը: Սա ոչնչով չի նվազեցնում Գլաձորի երախտիքն ու համալսարանական իրավունքը, ընդհակառակը, դրանք դրվում են առավել ստույգ ու մնայուն պատվանդանի վրա[4]:

Միայն ակնածալից հիացմամբ կարելի է այստեղ հիշատակել Գլաձորի թողած ձեռագրական ժառանգությունը, որի գիտական, մատենագրական, պատմական, գեղարվեստական և մշակութային արժեքը այնքան լիարժեք ու պատվաբեր է:

Գլաձորի գիտական գործունեության հետ օրգանական միասնություն ունեն նրա հոգեվոր-բարոյական և ազգային-քաղաքական մաքառումները: Մոնղոլական տիրապետության կեսդարյա մղձավանջը ոչ միայն Հայաստան երկիրն էր ամայացրել, այլև շատ էր բզկտել ու աղճատել հայ ժողովրդի ոգին, բարոյական նկարագիրը: Կարծես այսքանը քիչ էր, և կաթոլիկ առաքյալները, ոչ առանց նախապես մշակված ծրագրի ու ակնկալության, որսացել էին «ամենահարմար» ժամանակը ու հաստատվել հարևան Պարսկաստանի Մարաղա նահանգում, որտեղից, իրենց կարծիքով, «դյուրությամբ» կկարողանային ջլատել հայ ժողովրդի և Եկեղեցու միասնությունը՝ «շահելու» համար բազմահազար «փրկվածների» հոգիները: Եվ սա այնպիսի ուժով ու կազմակերպվածությամբ, որոնք հատուկ են կաթոլիկ Եկեղեցուն և պապականությանը: Պարզ է. սպառնալիքը լուրջ էր ու մեծ ոչ միայն կրոնական-եկեղեցական, այլև ազգային-քաղաքական առումով: Հարկավոր էր այն դիմագրավել խոհեմությամբ, իմաստությամբ և արիությամբ: Գլաձորցիների նվիրական ծառայություններից մեկն էլ այն եղավ, որ

[4] Տե՛ս ավելի մանրամասն **Փ. Անթապյան**, Արդյո՞ք հայ առաջին համալսարանը Գլաձորն է, «Բանբեր Երևանի համալսարանի», 1974, № 2, էջ 192—205·

նրանք այս դիմադրությանը նվիրաբերվեցին մեծ իրատեսությամբ ու եռանդով, թեկուզ և ոչ առանց արժեքավոր վոհերի (Հովհաննես և Հակոբ Քռնեցիների ու այլոց ոմանց դավանափոխությունը): Հայ Եկեղեցու, հայ ժողովրդի և Հայաստանի նկատմամբ պայծառ տեսիլքներով և իդեալներով տոգորված անհատներն են միայն ընդունակ նման մաքառման: Այդպիսին էին գլաձորցիները:

Արդյունքը եղավ այն, որ իրենց այս բոլորանվեր հայրենասիրական պայքարը շարունակեցին իրենց անմիջական հետնորդները՝ տաթևցիները. պաշտպանվեց հայ ժողովրդի ու Հայ Եկեղեցու մանավանդ այն օրերին այնքան կենսական միասնությունը, առավել տխուր աղճատումներից փրկվեցին հայ ժողովրդի բարոյական նկարագիրն ու ներքին կյանքը:

Ուրեմն, Գլաձորի համալսարանը, շարունակելով, ճոխացնելով ու վարգացնելով իր երախտաշատ նախորդների կրոնաաստվածաբանական, վարդապետական-դավանանքային, եկեղեցագիտական, մատենագրական, գիտական, գեղարվեստական, մշակութային, ազգային-քաղաքական ավանդներն ու ժառանգությունը, արարելով նորն ու իր սեփականը և նպաստելով այս բոլորի հետագա արդյունավետ առաջընթացին, իր իսկ սանի՝ Ստեփանոս Օրբելյանի, իմաստուն պատմագրի ու մեծ հայրենասերի պատկերավոր գնահատությամբ՝ էր «իբր ստապան Նոյեան՝ ի մէջ աշխարհակործան ալեացն», տապան գիտության, գրականության, պատմության, արվեստի, կրթության, մշակույթի և եկեղեցական-ազգային փրկության: